

առաջ ոգևորեալ էին 15,000 զորք , այժմ լուռ և տրտում էին : Անցայ Սո-
ղանլուէ՛ և հազիւ կարցայ ճաննաւ
տեղը ուր մեր բանակն կեցած էր . 'ի
դուժի երեք օր արդելեալ մնացի : Նո-
րէն տեսայ զՊէզօպատալ , և թողեալ ըզ-
ցուրտ բարձրադաշտս Հայաստանի , ի-
ջայ յարևակէզն Վրաստան : Օգոստոսի
մէկին մտայ 'ի Տփիսիս , քանի մ'օր մը-
նացի հօս սիրելի և զուարթ ընկերնե-
րով : Քանի մի երեկոյ անցուցի պար-
տէզներուն մէջ և լսեցի վրաց երգերը :
Առաջ գնացի . լեբանց վրայէն անդքս
նշանաւոր եղաւ 'ի Քուպի (Kobni) փո-
թորկի հանգիպելով գիշեր ժամանակ :
Առաւօտուն Քազպէք լեբան մօտէն ան-
ցնելով , հիանալու տեսարան տեսայ .
ճերմակ և կտոր կտոր ամպեր դադա-
թան վերայ շարք շարք դիզուած էին , և
առանձնացեալ վանքը , լուսաւորեալ ա-
րևուն ճառագայթերով , էր թուէր թէ
կը լողար օդուն մէջ վարեալ ամպերէն :
Կատարին Պալքան մեծավայելուչ
ձևով առջևս ելաւ . լեբանցամէջը , լի
անձրևաց ջրերով , կը գերազանցէր զթէ-
րէք վայրագութեամբ , և սպառնալից
որոտալով կ'անցնէր կ'երթար : Ափուն-
քըն պատառոտեալ էին , մեծամեծ քա-

րիւք տեղերէն շարժած՝ հեղեղին մէջ
տեղ կը կենային : Ետտ Օսէթիներ ճա-
նապարհը շտկելու կ'աշխատէին : Ան-
միտս ելայ ճանապարհէն . նեղ անցքե-
րէն անցնելով՝ հասայ մեծ Քապար-
տայի ընդարձակ դաշտերը : 'ի Վլատի-
կովկաս գտայ զՏ*** և Փ*** . երկուքն ևս
պատերազմիս մէջ առած վէրքերէն
առողջանալու համար ջրերու կ'երթա-
լին : Փ*** տան , սեղանին վրայ , գտայ
ուռս օրագիր մի . առաջին հատուածն ,
որոյ վրայ աչք ձգեցի , քննութիւն էր
իմ մի գրուածիս , որոյ հեղինակն ան-
խնայ նախատէր զիս և իմ՝ քերդուած-
ներս : Սկսայ բարձր ձայնով կարգալ-
փ*** խնդրեց որ ձևեր ևս ընեմ : Աւել-
ցնելու է որ քննիչն իւր դատողութեան
սովորական ձևն ևս տուած էր : Կիսա-
սարկաւազ մի , նշխարագործ կին և
տպարանի սրբադրիչ մի կը խորհրդա-
ծէին իմ գրուածիս վերայ : Փ*** խըն-
դիրքը այնչափ ինձ ախորժելի երեցաւ ,
որ սրտիս նեղութիւնն՝ սոյգ գրուած-
քին մասին՝ բոլորովին անհետացաւ , և
սկսանք խնտալ բոլոր սրտով :
Ահա այս ձևով ընդունեցաւ զիս իմ
սիրելի հայրենիքս :

Էջիւնք, գոճէք և շուք յէրգիտում . — Ճախ-
նախուտք Եփրատայ և մարգագետինք լե-
բանց կը բերն և առատութեամբ ազնիւ խոտ,
անոր համար Էջիւնք աւելի յողթանդամք
և հուժկուք են քան ուրիշ տեղ : Երբ կը
լծին զանոնք , սովորութիւն ունին անոնց
ուտքը պայտ դարնել . և այս գործոյս հա-
մար , զինգանին զետին կը սլուռկեցնեն ,
անոր չորս տուրնբը և կրկայն փայտի ձողի
մը կապելէն ետքը , և ապա չորս ստից ար-
տաքին կճղակուց վրայ կը դարնեն երկաթէ
թիթեղ մը , գամերով հաստատելով զայն :
Գոճէք բազմաթիւ են Էջիւնքում մի դաշ-
տավայրին վրայ , ուր յաճախ այս վիթխարի
անասնոց երկայն կարուանք կը տեսնուին ,
որ կը քաշեն կրկին անուով ծանր կառքեր :

որոց լիսեռն կամ քիչ կամ բնաւ չօժտծ,
անհա , առայի շառաչ մը կը հանեն , որ ինչ-
պէս կ'իբևալ կարևոր է , դրոմէլքը քաշե-
լու գրգռելու համար : Ընդհանրապէս կա-
րուանք գետի մը կամ ճախճախուտի մը
քով կանգ կ'առնուն . բոլոր գոճէք կ'եր-
թան զովանալու ջրոյն կամ աղմին մէջ , յոր
ամբողջ կ'ընկնին , միայն դուրս թողով
իրենց եղջիւրքը և ահագին ցուռիք :
Էջիւնքում մէջ շունք աւելի մեծղի են
և աւելի տաղտկացուցիչ քան այլուր ,
Ընդհանրապէս այս շանց մորթն սև է կամ
լէկ-եթէ լէկ ըլլայ մորթն , ցուռնկն սև կ'ըլ-
լայ . ձմեռն մորթն երկայն և թանձր ըլլա-
լով , արջու կը նմանին :

Գ. ՏԷՅՐՈՒ
Ճանապարհ . 'ի Հայաս . և 'ի Լազիս .